



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

21 օգոստոսի 2020 թվականի թիվ 79-Ա

ք. Երևան

«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2020 թվականի հուլիսի 7-ին հարուցված թիվ 6 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովի կողմից իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս՝ հաշվառման մատյանի տվյալների հաշվառումը վարելիս, արձանագրել է, որ «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից Հանձնաժողով չի ներկայացվել 2020 թվականի մայիս ամսվա ռադիոհաղորդումների հաշվառման մատյանի ամբողջական տվյալները, խախտելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի և Հանձնաժողովի 2010 թվականի մարտի 12-ի թիվ 2-Ն որոշման պահանջները, համաձայն որի Ընկերությունը ամբողջ ամսվա տվյալները գրավոր նամակով ամիսը մեկ անգամ ներկայացնում է Հանձնաժողով՝ մինչև հաջորդ ամսվա 5-ը:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2020 թվականի հուլիսի 7-ին Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը 2020 թվականի հունիսի 10-ին էլեկտրոնային փոստի միջոցով և 2020 թվականի հունիսի 19-ին թիվ 04-375 գրությամբ դիմել է Ընկերությանը՝ հաշվառման մատյանի ամբողջական տվյալները ներկայացնելու պահանջով: Սակայն Ընկերության կողմից հաշվառման մատյանը չի ներկայացվել, որի արդյունքում 2020 թվականի հուլիսի 7-ին Հանձնաժողովի կողմից արձանագրվել է իրավախախտում:

Հանձնաժողովը 2020 թվականի հուլիսի 9-ին հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել է Ընկերությանը և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները :

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հանձնաժողով ներկայացրած գրավոր պատասխանում Ընկերությունը պարզաբանել է, որ հաշվի առնելով 2020 թվականի մարտի 16-ին Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրությունը՝ Ընկերությունը դեռ մարտի 12-ից ամբողջ աշխատակազմով անցել է հեռավար աշխատանքի և տեխնիկապես անհնար է դարձել ապահովել ռադիոհաղորդումների հաշվառման մատյանի ամբողջական տվյալների գրանցումը :

Ընկերությունն իր պարզաբանումներում նշում է նաև, որ էլնելով արտակարգ դրության պայմաններից՝ գովազդատուները դադարեցրել են իրենց գովազդների տրամադրելը, և Ընկերությունը հայտնվել է ֆինանսական անելանելի վիճակում, ինչի պատճառով չկարողանալով աշխատողներին վճարել աշխատավարձ՝ կրճատել է աշխատատեղերը, այդ թվում նաև գրանցամատյանի համար պատասխանատու աշխատատակցին:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված և ներկայացրած փաստերը, որի արդյունքում հայտնի է դարձել, որ Ընկերությունը Հանձնաժողով չի ներկայացրել 2020 թվականի մայիս ամսվա ռադիոհաղորդումների հաշվառման մատյանի ամբողջական տվյալները, դրանով իսկ խախտելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է՝ հեռուստառադիոընկերությունները հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանի տվյալները ներկայացնում են Հանձնաժողով: Հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանում հաշվառման կարգը սահմանում է Հանձնաժողովը:

«Հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանում հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 2-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 10-րդ կետը սահմանում է՝ հեռուստառադիոընկերությունը հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանի յուրաքանչյուր ամսվա առաջին կեսի տվյալներն էլեկտրոնային տարբերակով՝ Հանձնաժողովի կողմից տրամադրած էլեկտրոնային ծրագրային ապահովմամբ, Հանձնաժողով է ներկայացնում մինչև տվյալ ամսվա 20-ը, իսկ երկրորդ կեսի տվյալները՝ մինչև հաջորդ ամսվա 5-ը: Ամբողջ ամսվա տվյալները գրավոր նամակով ամիսը մեկ անգամ ներկայացնում է Հանձնաժողով՝ հաջորդ ամսվա մինչև 5-ը:

Նշված արարքը համապատասխանում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 18-րդ մասի հատկանիշներին:

2020 թվականի հուլիսի 16-ին ընդունվել և սույն թվականի օգոստոսի 7-ին ուժի մեջ է մտել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքը, որը վերոնշյալ արարքի վերաբերյալ ունի այլ իրավական կարգավորում:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզիա ստացած Հեռարձակողները պարտավոր են վարել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան, իսկ 2-րդ մասով նշված է, որ տեսալսողական հաղորդումները պետք է գրանցվեն կարգավորող պետական մարմնի համար հասանելիություն ունեցող տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում, որի ձևը և վարման կարգը սահմանում է կարգավորող պետական մարմինը:

Համաձայն «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» 2000 թվականի հոկտեմբերի 9-ի ՀՕ-97 օրենքն ուժը կորցրած է ճանաչվում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝

բ) օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ Ընկերության նկատմամբ հարուցված թիվ 6 վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասը և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշեց*.

1. Կարճել «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 6 վարչական վարույթը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակցին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

21 օգոստոսի 2020թ.

ք. Երևան